ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

03 հունիսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Վալոդյա Գրիգորյանը, Դավիթ Ախտոյանը, Լյուդվիգ Գյուլնազարյանը, Արաքսյա Վարդանյանը, Մարինե Աբրահամյանը, Դավիթ Մինասյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Անյուտա Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը

ԼՍԵՑԻՆ - ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի հունիսի 3-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14	Դեմ -0	Ձեռնպահ -1
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ		
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ		
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ		
ՁԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ		
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ		
ՂԱՋԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ		
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱՋ		
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ		
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ		
ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ		

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 26-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ -</u> *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N 48- Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԼՈՒՍԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ)*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 12-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու՝ 2022 թվականի ապրիլի 11-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին» N 48-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -14	Դեմ -1	Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ	
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ		
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ		
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ		
ՁԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ		
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ		
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ		
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ		
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ		
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ		
ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ		

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 27-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ-</u> *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 610-րդ, 612-րդ և 616-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի՝ 12.05.2025 թվականի N09/10280-2025 գրությունը և Փարաքար համայնքի ղեկավարի առաջարկությունը՝***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող, Բաղրամյան գյուղում գտնվող Բաղրամյանի վարչական ղեկավարի նստավայրում (հիմք սեփականության իրավունքի վկայական

2657881, տրված՝ 10 հունիսի 2011 թվականին) առկա 1/մեկ/ աշխատասենյակը՝ 24.4 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, մեկ տարի ժամկետով, ամսական 150.000 / մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ վարձավճարով վարձակալության իրավունքով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը՝ տրամադրելու առաջարկին:
2. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին իրավունք վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության հետ, մեկ տարի ժամկետով կնքել գույքի վարձակալության պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամ Կ.Գրիգորյանը խնդրեց պարզաբանել, թե ինչ սկզբունքով է ներկայացվել վարձակալության արժեքը, այլ շահագրգիռ մարմիններին առաջարկվել է նշված գույքը վարձակալությամբ, զեկուցողը պարզաբանեց, որ քննարկումը եղել է բանավոր և խելամիտ առաջարկ է ամսեկան 150000 դրամ վարձավճարը՝ առանց կոմունալ վճարների:

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ
ՁԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ
ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 28-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ -</u> *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԵՐՁԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԵԿ. ԱՐԱՔՍՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ)*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» և «է» ենթակետերով, 25-րդ հոդվածով, «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ մասով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի <<Միասնություն>> կուսակցությունների դաշինք խմբակցության ավագանու անդամների՝ 2025 թվականի մայիսի 23-ի N 2368, ինչպես նաև «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Այգեկ մասնաճյուղի անձնակազմի մայիսի 30-ի N 2495 դիմումները. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է՝***

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Մերձավանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /պետական գրանցման համար՝ 99.215.1340792, գրանցման ամսաթիվ՝ 11/09/2023 թ., ՀՎՀՀ՝ 04450411/,
2. Լուծարման ժամկետը սահմանել մինչև 2025 թվականի օգոստոսի 4-ը, իսկ այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:
3. Համայնքի ղեկավարին վերապահել լուծարման հանձնաժողով (լուծարող) նշանակելու լիազորությունը՝ կատարման համար սահմանելով 2-օրյա ժամկետ:
4. Լուծարվող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների գույքը /ըստ գույքագրման արդյունքների/ հանձնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքին:
5.Առաջարկել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթներ:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանի Կ. Արթենյանը նշեց, որ հիմք կարելի է ընդունել ավագանու դիմումը, բայց ոչ աշխատակիցներինը, նիստը վարողը պարզաբանեց, որ Այգեկ գյուղի վարչական ղեկավարին հանդիպել են աշխատակիցները՝ խնդրանքով առանձնացնել մանկապարտեզների կառավարումը:

Կ.Գրիգորյանը նշեց, որ այս որոշումը ունի միտում ազատվելու ներկայիս մանկապարտեզի տնօրենից՝ Հեքիմյանից, նշելով, որ վերջինս իր աշխատանքները կատարում է շատ բարեխիղճ: Քաղաքական նկատառումներով ճիշտ չէ ազատվել աշխատակիցներից:

Նիստը վարողը նշեց, որ նմանատիպ գործընթաց կատարվել է տարիներ առաջ, արդյունքում մի շարք աշխատակիցներ ազատվել են աշխատանքից:
2024 թվականին տեսչական մարմինը ստուգումներ է անցկացրել մանկապարտեզում, որի արդյունքում արձանագրել են, որ մի շարք աշխատակիցներ չեն համապատասխանում զբաղեցրած պաշտոններին, կրթությունը չի համապատասխանում:

Կ.Գրիգորյանը նշեց, որ Ձեր ասածից պարզ է դառնում,որ սա վենդետա է, դուք կարող եք վատ աշխատողին հեռացնել աշխատանքից, եթե պարտականությունները չի կատարում, բայց ոչ լուծարելու միջոցով ազատվել աշխատակիցներից:
Նիստը վարողը պարզաբանեց, որ նման կառավարումը ոչ արդյունավետ է, որի արդյունքում տուժում են բոլոր գործընթացները:

Կողմ -11	Դեմ -2	Ձեռնպահ -2
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ	ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ	ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ	ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ		
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ		
ՁԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ		
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ		
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ		
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ		
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ		

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 29-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ-</u> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԶԵԿ. ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 2-ի թիվ 9-Ա որոշմամբ ընդունված ավագանու կանոնակարգի 84-88-րդ և 95-րդ կետերը, ինչպես նաև «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Միասնություն դաշինք» խմբակցությունների կողմից մշտական գործող հանձնաժողովների կազմի վերաբերյալ ներկայացված առաջարկությունները՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու մշտական գործող հանձնաժողովներ և հաստատել դրանց անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովների ստեղծելու մասին ավագանու որոշման ընդունման օրվանից հնգօրյա ժամկետում գումարվում են հանձնաժողովների առաջին նիստերը, որոնց ժամանակ հանձնաժողովների կազմերից ընտրվում են հանձնաժողովների նախագահներն ու քարտուղարները և մեկամսյա ժամկետում ընդունվում են հանձնաժողովների աշխատակարգերը:
3. Հանձնաժողովներն իրենց գործունեությունը կազմակերպում են ըստ ընդունած աշխատակարգերի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամ Կ.Արթենյանը խնդրեց պարզաբանել, թե ինչ սկզբունքով են ձևավորվել հանձնաժողովները, նիստը վարողը նշեց, որ բոլոր խմբակցություններին ուղարկվել են գրություններ, որտեղ նշվել են ձևավորված հանձնաժողովները և առաջարկվել է յուրքանչյուր հանձնաժողովին ներկայացնել անդամներ, ստացվել են գրությունները, որի հիման վրա էլ ձևավորվել են հանձնաժողովները՝ բաղկացած մինչև 9 անդամից: Յուրաքանչյուր ավագանու անդամ կարող է ընդգրկվել մի հանձնաժողովի կազմում:

Կողմ -14	Դեմ -1	Ձեռնպահ -0
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ	
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ		
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ		
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ		
ՋԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ		
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ		
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ		
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ		
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ		
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ		
ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ		

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 30-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱԿՈԲ ՄԻՔԱԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 206-րդ հոդվածի 2-րդ մասով, 685-րդ հոդվածի 1-ին մասով, 687-րդ և 689-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի մարտի 28-ի թիվ 01/14/02448-2025 գրությունը՝ համայնքում գործող առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկական կազմակերպությունների շենքերի կառուցում և բժշկական կահույքով, սաքավորումներով և պարագաներով հագեցման ծրագրի իրականացման համար հողատարածքի հատկացման գործընթացն ապահովելու վերաբերյալ . ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Շառլ Տիրան Թեքեյան փողոց թիվ 2/2 հասցեում գտնվող 0,0794 հա բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասն անհատույց օգտագործման իրավունքով նվիրել Հայաստանի Հանրապետությանը՝ Մուսալեռ գյուղում բժշկական ամբուլատորիա կառուցելու համար:
2. Տարածքային զարգացման հիմնադրամի հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր:
3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ներկայացնել պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ընդունման պահից:

Կողմ -14	Դեմ -0	Ձեռնպահ -1
ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԽՎԵՐԴՅԱՆ ՕՆԻԿ		
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԻԱՆԱ		
ԵՍԱՅԱՆ ՆԵԼԼԻ		
ՋԱՔԵՎՈՍՅԱՆ ՍՈՒՐԻԿ		
ԹՈՐՈՍՅԱՆ ԷՄՄԱ		
ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՈՒԿ		
ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿԱԶ		
ՍԱՖԱՐՅԱՆ ԱՆՅՈՒՏԱ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ		
ՖԱՐՖԱՐՅԱՆ ԱՎԵՏԻՍ		
ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՓԻՆԵ		
ԱՐԹԵՆՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ		
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ		

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 31-Ա)*

Ավագանու անդամներ

ԱԲՐԱՀԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՕՆԻԿ ԱԽՎԵՐԴՅԱՆ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԵՍԱՅԱՆ

ՍՈՒՐԻԿ ՋԱՔԵՎՈՍՅԱՆ

ԷՄՄԱ ԹՈՐՈՍՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱՋ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱԲՐԱՀԱՄ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԱՎԵՏԻՍ ՖԱՐՖԱՐՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՐԱՊԵՏ ԱՐԹԵՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ԱՆՅՈՒՏԱ ՍԱՖԱՐՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը _____